

մեկնելու, այնտեղ Մեծի պահոց ընթացքում՝ քարոզներ
խօսելու համար։ Այժմ Տ. Գարեգին վարդապետը գտնվում
է Տփխիսում։

Մեծի պահոց երկրորդ շաբաթուանից սկսուած են
Մայր Աթոռի հօգեոր ձեմարանի հարցաքննութիւնները։
Մանկավարժական ժողովը որոշել էր հրապարակական
քննութիւն անել բոլոր դասարաններում՝ աւարտական
առարկաներից, բայց զիջանելով աշակերտների պահանջին,
կրկին ժողով անելով որոշեց հրապարակական քննութիւն
անել միայն լսարաններում, վերացնել միւս դասարանների
քննութիւնները, իսկ Զ. դասարանի համար բաւականա-
նալ դասարանական քննութիւններով։ Տփխիսից վերա-
դարձել են և արտակարգ քննութիւն են տալիս նաև
երկու ամիս առաջ հեռացած աշակերտները։

Քննութիւնների ցուցակը ամեն տարի տպւում էր և
բաժանեւում միաբաններին, որպէս զի ցանկացողները կա-
րողանային ներկայ գտնուել իրենց ուղած առարկաների
քննութեանը։ Այս տարի այդ էլ չարեց ներկայ վարչու-
թիւնը։ Պատճառները մեզ անյայտ են։ Արհամարհանք է
այդ գեղի միաբանութիւնը, չկամութիւն թէ մի այլ բան,
միւնոյն է։ մենք դատապարտում ենք այդպիսի վերա-
բերմունքը, որ կարող է միայն սառնութիւն և ատելու-
թիւն յառաջ բերել ձեմարանի և միաբանութեան մէջ։



† ՄԿՐՏԻՉ ՊԱԼԵԱՆ

(1834—1907)

Ներկայ թօւականի յօւնուար 13-ին կնքեց իւր մահ-
կանացուն Մկրտիչ Պալեանը Եղեանում և մեծ շքով
թաղուեցաւ։

Հանգուցեալը ծննդեամբ Տրապիզոնից էր, իսկ կըր-
թութիւնը Վենետիկի Մխիթարեանց մօտ ստացել։ Նորա

սիրած առարկան հայերէն էր և հմուտ նախնեաց դրականութեան և պաշտող Ալիշանի և Բագրատունու։ Նորագործունէութեան ասպարէզը դպրոցն է եղել, որին ծառայել է զանազան ընդհատառմերով 50 տարի։ Միայն 1903-ին Երևանում նորա մանկավարժական յիսնամեակը համեստ, բայց և վայելուչ հանդէսով կատարելուց յետոյ՝ քաշուեցաւ այդ ասպարէզից և 4 տարի հանդիսուտ առաւ, ստանալով չափազանց համեստ կենսաթոշակ իւր կէս դար դպրոցական գործին ծառայելուն իր վարձ։ Մկրտիչ Պալեանը պաշտօն է վարել Հայոց յայտնի դպրոցներում՝ սկսած Տրապիզոնից, ուր ուսուցչութեան սկիզբն է դրել, յետոյ անցել է Թէոդոսիա Խալիքեան ուսումնարան, յետոյ Գէորգեան Ճեմարան, ապա Ներսիսեան դպրանոց, կրկին Ճեմարան, յետոյ Երևանի թեմական դպրանոց, ուր և աւարտում է գործունէութեան շրջանը։ Իր անձնաւորութիւն՝ իւր երիտասարդական աշխուժով, զուարժ և ոգեսրուող բնաւորութեամբ սիրելի էր և տպաւորիչ։ Ուրախութեան սեղանի շուրջը չէր կարելի սառը մնալ նորա խրոխտածայն ճառերը և կենացները լսելիս, մանաւանդ նորա յայտնի «Այս բաժակ, դառն բաժակ, զոր ըմպեցին Մեսրոբ, Սահակ» իւր յօրինած ոտանաւորը արտասանելիս։

Իր ուսուցիչ միշտ դրաւել է իւր աշակերտներին իւր նախնեաց մատենագիրների հմտութեամբ և նոցաջատագութեամբ։ Ոգեսրել է ժամանակին իւր դրաբարի տիրապետութեամբ։ Շատերը ցանկանալով հետեւ նորա օրինակին՝ առանձնապէս նուիրուել են Խորենացու կամ Եղիշէի ուսումնասիրութեան։

Նա գործել է և իր դրագէտ, աշխատակցել է յատկապէս «Արարատ» ամսագրին թէ արձակ և թէ ոտանաւոր գորուածքներով։

Հանգատեան ապրիներն անգամ նա անգործ չէր նստած, կազմում էր Խորենացու առանձին բառարանը, որի վախճանը չտեսած հասաւ իւրը։ Հանգիստ ոսկերացդ, հայ հոգեսր անդաստանի անխոնջ մշակ։